վուԹայի, ճեպէի հանապազ, զի վաստակի-
ցեմ ճանապարհի խարճ. զի ձեռս զատ չէր
մնացել. եւ օրն Ծ. Կ. դրամ վաստակէի։ Աս-
տուած չէն պահէ Ստամպօլ ժողովուրդն եւ
15 զքահանայս, զի այն ամն ժողվեցի ուԹսուն
զուռուշ։

ՄԵԿՆՈՒՄՆ

Եւ Փոխման Աստուածածնին[1] բռնէին ուխ-
տաւորքն նաւ. եւ ես գնացեալ վարձեցի տեղ
մի. եւ պատրաստուԹիւն ճանպի եւ զախի-
20 բայի տեսայ. զի ասին ինձ ԹէԿ ցամքով գնալն
շատ դաՓար կ՝երԹայ եւ խարճ։ Եւ զի ամե-
նայն ոք սիրելի ունէր, ազգական կամ հէմ-
չէրի, ես զարիպ եւ ոչ զոք բնաւ։ Բայց մար-
դիկ աշխարհին այն աստուածասէրք, երկիւ-
25 զածք, մարդասէրք եւ օտարասէրք՝ տեսեալ
զիս տրտում եւ տխուր՝ մխիԹարէին, սփո-
փէին, մինչեւ ուսայ եւ ընդելացայ ընդ նոսա։

Եւ մտեալ ի նաւ, ել հողմ բարի եւ տարաւ
զմեզ իրեք օրն ի ԿԷԼԻՊՕԼԻ. զի անդ եօխ-
30 լամա կ՝անեն կէմիքն։ Եւ կացաք անդ իրեք
օր վասն ջրի եւ պաքսիմաԹի։ Եւ անտի հա-
սաք ի մեծն ՌՍՏՕՍ, որ է մեծ սկէլէ եւ ա-
նառիկ բերԹ։ Եւ զտաք անդ զՄալիլ փաշան[2]

11 ճէպէի։ — 21 կերԹա։ — 23 մարդիք. յաստուածասէրք։ — 27 յուսայ։

[1] Այն է 14 Օգոստոս 1614։

[2] Մալիլ փաշա երկրորդ անգամ ծովակալ անուանուած էր 1613ին։ Յաջորդ տարին 45 անհատէ բաղկացած նաւատորմիղով նաւած էր դէպի ՄալԹա (1614 Յուլիս—Նոյեմբ.), նուաճելու ապստամբ Դայի Սէֆէրն (Տրիպոլիս) եւ զսպելու ծովահէնները։ Hammer, Geschichte des Osmanischen Reiches, II, 752։